



**ԿՐՕՆԱԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ Ս. ԳՐԱՅԻՆ  
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՐԿԱՄՍԱԹԵՐԹ  
ԳԱՆԱՏԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ**

ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ

Դ. ՏԱՐԻ, ԹԻՒ 5, 2004 (23)

**LUYS** — Revue bimestrielle


Prélature Arménienne du Canada

Rédacteur : Papken Topjian

3401 Olivar-Asselin, Montréal, Qc. Canada H4J 1L5

Tél.: (514) 856-1200 • Fax : (514) 856-1805

Courriel : armenianprelacy@ca.inter.net



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳԻՐՔԵՐԸ

Միտոն Ծ.Վրդ. Ազնիկեան

ԿԱՆԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԸ

Յակոբ Արք. Գլնճեան

ՅԱԿՈՒ Դ. ԶՈՒՂԱՅԵՑԻ, ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՑԻ ԵՒ

ՀԱՅ ԱՍՏՈՒԱԾԱԹՈՒՆՉԻ ԱՌԱՋԻՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Վեր. Մանուէլ Ծինպաշեան

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՆՎԱՅԵԼ

«ԳՐԱԽՕՍԱԿԱՆ»Ի ՄԸ ՄԱՍԻՆ

Վեր. Վահան Յ. Թուրթիկեան

ՔՐՈՆԻԿ

**ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳԻՐՔԵՐԸ**  
**ԻՍՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԷՆ ՄԻՆՉԵՒ**  
**ԲԱՐԵԼՈՆԵԱՆ ԳԵՐՈՒԹԻՒՆ**  
**(Ն. Ք. 1020-587)**

Պատմական գիրքերու մաս կազմող Սամուէլի Ա. եւ Բ. գիրքերը, ինչպէս նաեւ Ա. եւ Բ. թագաւորացի գիրքերը զորս այժմ նկատի ունինք եւ պիտի ջանանք ներկայացնել կ'ընդգրկէ, պատմութեան շարայար իրերայաջորդ դէպքերու եւ անոնց ետին կանգող պատմական դէմքերու գործունէութեանց պատմագրութեան գրեթէ հինգ հարիւր տարիներու ժամանակամիջոց մը (Ն. Ք. 1020/10 - 587/6), որ սկիզբ կ'առնէ Իսրայէլի միացեալ թագաւորութեամբ (Սաւուղ-Դաւիթ-Սողոմոն, Ն. Ք. 1020-922), անշուշտ ներառելով անոնց յաջորդող թագաւորութեան երկուքի բաժանման շրջանը՝ հիւսիսի 10 եւ հարաւի 2 ցեղերու միջեւ Ն. Ք. 922-ին, մինչեւ բաժանեալ թագաւորութեանց կործանումը՝ նախ հիւսիսի եւ ապա հարաւի: Հիւսիսի կամ Իսրայէլի թագաւորութեան մայրաքաղաքը՝ Սամարիա, Ն. Ք. 722ին Ասորեստանի Սարգոն թագաւորի հարուածներու ներքեւ կ'իյնայ: Իսկ հարաւի կամ Յուդայի թագաւորութեան մայրաքաղաքը՝ Երուսաղէմ, Ն. Ք. 587/6ին կը կործանի Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին կողմէ:

**Ա. եւ Բ. ՍԱՄՈՒԷԼ կամ Ա. եւ Բ. ԹԱԳԱՒՈՐԱՑ**

Պատմական այս երկու գիրքերը կը պատմեն Սամուէլի կեանքն ու գործերը որպէս դատաւոր, քահանայ եւ մարգարէ, որ իր արժանիքներով եւ իմաստութեամբ Իսրայէլի պատմութեան նոր ուղղութիւն կը բերէ, նման մեծ առաջնորդ՝ Մովսէսի: Սամուէլ վերջին օղակը դատաւորներու իշխանութեան, թագաւոր օժելով Սաւուղը՝ հաստատողը կ'ըլլայ միապետական իշխանութեան:

Ա. եւ Բ. գիրքերու բովանդակութիւնը մինչեւ Սաւուղի մահը, կարելի է գլխաւոր չորս մասերու բաժնել.

1. Սամուէլի կեանքն ու Միապետութեան հաստատումը (Ա. Սամուէլ 1-15):
2. Սաւուղ եւ Դաւիթ (Ա. Սամուէլ 16էն Բ. Սամուէլ 8):
3. Դաւիթի թագաւորութիւնը (Բ. Սամուէլ 9-20):
4. Դէպքերու յաւելուած մը (Բ. Սամուէլ 21-24):

Իսկ Գ. եւ Դ. թագաւորաց գիրքերը կը ներկայացնեն նախ միացեալ թագաւորութեան — սկսեալ Դաւիթ արքայի վերջին օրերու դէպքերն ու մահը, ինչպէս նաեւ Սողոմոն արքայի ու ապա բաժանեալ թագաւորութեանց ժամանակաշրջանի — պատմութիւնը, մինչեւ Յուդայի վերջին թագաւոր՝ Յովակիմի մահը:

- Գ. թագաւորացը ունի 22, իսկ Դ. թագաւորացը 25 գլուխ:
- Գ. թագաւորացի բովանդակութիւնը կարելի է բաժնել երեք մասերու.

1. Դաւիթ արքայի մահը եւ Սողոմոնի թագաւորութիւնը (Գ. Թագ. 1-11:43):
  2. Թագաւորութեան երկուքի — Իսրայէլ-Հիւսիս եւ Յուդա-Հարաւ — բաժանումը եւ բաժանեալ զուգընթաց թագաւորութեանց պատմական նշանակելի դէպքերու պատմութիւնը (Գ. Թագ. 12:1 - 16:34):
  3. Եղիա Մարգարէի կեանքն ու գործունէութիւնը (Գ. Թագ. 17:1 - 22:53):
- Իսկ Դ. թագաւորացի բովանդակութիւնը կարելի է բաժնել չորս մասերու.*
1. Աւարտ Եղիա Մարգարէի առաքելութեան (Դ. Թագ. 1:1-2:11):
  2. Եղիսէ Մարգարէի կեանքն ու գործունէութիւնը (Դ. Թագ. 2:12-9:10):
  3. Յէուի թագաւորութենէն մինչեւ Սամարիայի անկումը Ն. Ք. 722 (Դ. Թագ. 9:11-17:41):
  4. Յուդայի կամ Հարաւի եզեկի արքայի (Ն. Ք. 715-687) ժամանակաշրջանի դէպքերէն մինչեւ Երուսաղմէի կործանումը Նաբուզոդոնոսորի կողմէ եւ Հրէից Բաբելոն գերութիւնը Ն. Ք. 586ին (Դ. Թագ. 18-25):

Իսրայէլի Միացեալ Թագաւորութեան Գահակալներ

Սաւուղ	Ն. Ք. 1020-1010
Դաւիթ	Ն. Ք. 1000-961
Սողոմոն	Ն. Ք. 961-922

Իսրայէլի Բաժանեալ Թագաւորութեան Գահակալներ

Հիւսիսի՝ Իսրայէլ Մայրաքաղաք՝ Սամարիա		Հարաւի՝ Յուդա Մայրաքաղաք՝ Երուսաղմ	
Յերոբոամ	Ն.Ք. 922-901	Ռոբոամ	Ն.Ք. 922-915
		Աբիա	Ն.Ք. 915-913
		Ասա	Ն.Ք. 913-873
Նաբատ	Ն.Ք. 901-900		
Բաասա	Ն.Ք. 900-877		
Էլա	Ն.Ք. 877-876		
Զամբրի	Ն.Ք. 876	Յովսափատ	Ն.Ք. 873-849
Ամրի	Ն.Ք. 876-869		
Աքաբ	Ն.Ք. 869-850		
	(Եղիա Մարգարէ)		
Ոքոզիա	Ն.Ք. 850-849		
	(Եղիսէ Մարգարէ)		

Յուրբամ	Ն.Ք. 849-843/2	Յուրբամ	Ն.Ք. 849-843
		Որոգիա	Ն.Ք. 843/2
		Գոթողիա	Ն.Ք. 842-837
Յէու	Ն.Ք. 843-815	Յուրբամ	Ն.Ք. 837-800
Յուրբազ	Ն.Ք. 815-802		
Յուրբամ	Ն.Ք. 802-786	Ամասիա	Ն.Ք. 800-783
Յերոբովամ Բ.	Ն.Ք. 786-746	Ողիա	Ն.Ք. 783-742
Զաքարիա	Ն.Ք. 746-745		
	(Ամովս)	Յուրբամ	Ն.Ք. 742-735
Սեղղու	Ն.Ք. 745		
	(Ովսէ)		
Մանայեմ	Ն.Ք. 745-737		
		(Եսայի Մարգարէ)	
Փակէիա	Ն.Ք. 737-736	(Միքիա Մարգարէ)	
Փակէէ	Ն.Ք. 736-732		
Ովսէէ	Ն.Ք. 732-724		

Սամարիոյ գրաւումը Սարգոն Բ-ի կողմէ եւ  
անկումը Հիւսիսի թագաւորութեան Ն.Ք. 722/1

Աքազ	Ն.Ք. 735-715
Եզեկիա	Ն.Ք. 715-687/6
Մանասէ	Ն.Ք. 687/6-642
Ամոն	Ն.Ք. 642-640
Յուրբիա	Ն.Ք. 640-609
	(Երեմիա Մարգարէ)
	(Սոփոնիա Մարգարէ)
	(Նաւուս)
Յուրբազ	Ն.Ք. 609
Յուրբակիմ	Ն.Ք. 609-598
	(Ամբակում)
Յեքոնիա	Ն.Ք. 598/7
	(Եզեկիէլ Մարգարէ)
	(Երեմիա Մարգարէ)
Սեզեկիա	Ն.Ք. 597-587

Երուսաղէմի անկումը Ն.Ք. 587ին եւ հրէից Բաբելոն գերութիւնը:  
(Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ)

Իսրայէլի պատմութեան գրեթէ հինգ հարիւր տարիներու այս ժամանա-

կաշքանը սկիզբ կ'առնէ կեդրոնական միացեալ թագաւորութեամբ, որ հազիւ մէկ դարու կեանք կ'ունենայ, որուն ընթացքին Իսրայէլ կը յաջողի միապետական կառույց յառաջացնել եւ կազմակերպ արքունի վարչակարգ հաստատել: Միապետական այս վարչակարգի ներքեւ Իսրայէլի կարողականութիւնը կ'ունենայ վերջնականապէս նուաճելու Պաղեստին-Քանանի երկիրն ու բնիկ ժողովուրդները եւ կը յաջողի դառնալ շրջանային քաղաքական նկատառելի ուժ իր տնտեսութեամբ, արքունիքով, բանակով եւ միջազգային յարաբերութիւններով: Անոր սահմանները կ'եզերէին Սուրիան եւ կը տարածուէին մինչեւ Միսրի անապատ: Միապետական վարչակարգը կեդրոնացած Տաճարին շուրջ՝ միազանգեց ազգը կրօնական, քաղաքական, մշակութային թէ տնտեսական բնագաւառներէն ներս ու դրական բացառիկ նուաճումներ արձանագրեց եւ իրաւամբ այս դարը կոչուեցաւ Իսրայէլի պատմութեան ոսկեդարը, որմէ ետք, Իսրայէլ երբեք պիտի չունենար միացեալ հզօր պետական կեանք: Որով միացեալ թագաւորութեան հաստատումէն հազիւ դար մը անց եւ Սողոմոնի փառաւոր շրջանէն ետք, իր որդւոյն՝ Ռոբովամի օրով Իսրայէլի տասներկու ցեղերը ներքին պայքարներու պատճառաւ երկու ճակատներու բաժնուած, պիտի կիսէին երկիրը եւ հաստատէին երկու անջատ թագաւորութիւններ, մին՝ Հիւսիսի թագաւորութիւնը՝ Սամարիա մայրաքաղաքով, միւսը Հարաւի՝ Երուսաղէմ մայրաքաղաքով: Յաճախ կոչուած նաեւ «Իսրայէլի» եւ «Յուդայի» թագաւորութիւններ:

Սաւուղ-Դաւիթ-Սողոմոնով հաստատուած միապետութեան ջանքերով վերջնականապէս կը նուաճուին Քանանի բնիկ, թշնամի եւ հզօր մրցակից ցեղերու մնացորդները, մանաւանդ՝ անպարտելի եւ գերակայ նկատուած Փղշտացիներու ռազմական սպառնալիքներուն վերջ կը դրուի, որոնք կը չէզոքացուին, կը փճացուին կամ ձուլումի եւ կամ ալ ստրկացումի կ'ենթարկուին:

Միացեալ եւ ապա բաժանեալ թագաւորութեանց մօտաւորապէս հինգ հարիւր տարիներու ժամանակաշրջանը Իսրայէլի ազգին պիտի տար կրօնական — Եհովայապաշտ / Միաստուածեան — պատկանելիութեան մը միջազգային պետական ճանաչում, ու յառաջ բերեր եւ զարգացներ ազգային ինքնուրոյն մշակոյթ եւ գրականութիւն որ յետագային պիտի յատկանշուէր համամարդկային արժէքներու ուսուցումներով: Այլ խօսքով՝ մեզի ծանօթ Հին Կտակարանի կամ Աստուածաշունչ Մատեանի ամբողջ գրականութիւնը, այսինքն՝ Օրէնքի գիրքերը, Թագաւորաց եւ Մարգարէական գիրքերը, Սաղմոսներն ու Առակները այս շրջանին է, որ ընդհանրապէս միահաւաքուեցան, գրուեցան, կազմուեցան եւ վերախմբագրուեցան:

Թագաւորական այս շրջանին է որ կառուցուեցաւ ազգային օրինապաշտ Միաստուածեան կրօնի Եհովայապաշտ կեդրոնական տաճարը եւ կազմակերպուեցաւ քահանայական դասը իր իրաւունքներով, պարտականութիւններով եւ պարտաւորութիւններով, հաստատուեցան եւ հռչակուեցան կրօնական եւ ազգային միութիւնը շեշտող սկզբունքներ եւ օրէնքներ: Քանանեան հողամասի եւ անոր բնիկ ժողովուրդներու եւ ցեղերու դէմ աւելի քան երեք հարիւր տարիներու արիւնալի եւ բուռն կերպով պայքար մղելէ ու քաղաքական եւ կրօնական

գերակայությունն ապահովել է ետք, Իսրայել քանանեան երկրամասի ամբողջ տարածքին կը հռչակէ եւ վերջնականապէս կը հաստատէ Միաստուածեան Եհովայապաշտ կրօնքի յաղթանակը, ջնջելով օտարամուտ Քանանեան աստուածներու պաշտամունքի ամէն երեւոյթ եւ ազդեցութիւն, զորս դարերէ ի վեր պայքարի ճակատներ յարդարեր էին Իսրայելի ժողովուրդին եւ անոր միաստուածեան կրօնին դէմ: Միաժամանակ սակայն, հակառակ արձանագրուած յաջողութիւններու եւ անոնց գուզընթաց, պակաս չեղան արտաքին ու ազգային ներքին տագնապներ, որոնք ազգը պառակտեցին եւ ի վերջոյ կործանումի առաջնորդեցին:

Միացեալ եւ ապա բաժանեալ զուգընթաց թագաւորութեանց հակամարտութիւնները եւ ներազգային տագնապները առիթ պիտի տային որ շրջանի հզօր պետութիւններ՝ Եգիպտոս, Ասորեստան եւ Բաբելոն, միջամտեն, եւ երկուքի տկարացումէն օգտուելով, Ասորեստան 722ին կործանելով եւ գրաւելով Սամարիան՝ վերջ կը դնէ Հիւսիսային թագաւորութեան եւ ժողովուրդի ընտրանին Ասորեստան կը գերէ: Այնուհետեւ հարաւային կամ Յուդայի թագաւորութիւնը իր գոյութիւնը մէկ ու կէս դար առանձին պահել է ետք, ի վերջոյ տեղի կու տար եւ կը նուաճուէր Քաղդէա-բաբելական աշխարհակալական ախորժակներուն Ն. Ք. 587/6ին:

Միաժամանակ արտաքին ու ներքին պայքարներով յատկանշուող բաժանեալ թագաւորութեանց երկուքուկէս դարերու (922-722) այս շրջանը, Իսրայելի համար կը նկատուի միջազգային դաշինքներու եւ պետական յարաբերութեանց ամենէն հարուստ եւ կարեւոր դարաշրջանը: Արտաքին շփումներու, պատերազմներու եւ ազգային տագնապներու այս շրջանին է, դարձեալ, որ երեւան կու գայ ու կը զարգանայ մարգարէական տեսլապաշտ գրականութիւնը: Արտաքին քաղաքական եւ մրցակից հզօր ուժերու՝ Եգիպտոս, Ասորեստան, Քաղդէա-բաբելական ճնշումներուն պատճառով ստեղծուած տագնապներն ու ազգային-կրօնական օտարամուտ, այլասերիչ հոսանքները երբ յաջողած կը թուէին ըլլալ եւ իրենց հակակշիռին տակ արդէն իսկ ազդեցութեանց գօտիներ ստեղծած Իսրայելի գոյգ թագաւորութեանց տարածքին՝ յատկապէս իշխող թագաւորական թէ՛ ազնուական դասակարգերու եւ քաղաքական շրջանականերէ ներս, աշխարհակալական նկատումներով կը սպառնային վերջ տալ Իսրայելի կրօնական անկախ գոյութեան:

Արդարեւ քաղաքական նկատառումներով եղած ամուսնական կապերու, դաշինքներու եւ կնքուած պետական համաձայնութիւններու երբեմն գրական բայց շատ յաճախ ժխտական արդիւնքներու պատճառած կրօնական եւ ազգային-քաղաքական պարտութիւնները, աւերները, նուաստացումներն ու զիջումները միանգամ ընդմիջտ կասեցնելու եւ կտրականապէս ջնջելու համար, տաճարին ու անոր շուրջ կազմակերպեցին, խմորեցին, աճեցուցին, վերաթարմացուցին, կուսեցին եւ յառաջացուցին կրօնական մոլեռանդներու եւ յանուն Եհովայի պայքարի դաշտ իջած ծայրայեղականներու փաղանքի մը՝ մարգարէներու, որոնք անտեղիտալի եւ հաւատաւոր մարտիկները իրենց դաւանած Միաստուածեան կրօնքի օրէնքներուն եւ հոգեւոր, կրօնական ու բարոյական արժէքներու հաւատալիքներուն ու ազգային սկզբունքներուն՝ որդեգրեցին ազգապահպանումի մարտավա-

րական նոր եղանակ, իրենց գոյութենական անհավասար այդ պայքարները այլ կերպ մղելու: Թագաւորութեան բաժանեալ դարերուն ու անկէ ետք մարգարէներ՝ Ամովս, Ովսէէ, Միքիէ, Եսայի, Երեմիա, մղուած կրօնական բուռն նախանձախնդրութենէ եւ թելադրուած ազգային հոգեւոր արժէքներու անեղծ պահպանման հրամայականէն՝ յանդգնօրէն հոգեւոր յեղափոխութիւն յառաջացուցին եւ ծաւալեցին: Անոնք քաղաքական անորոշութեանց, թոհորուհին, շփոթութեանց եւ ճգնաժամային օրերուն՝ ժողովուրդը յորդորեցին, ինքնավստահութիւն ներշնչեցին եւ ընկերային արդարութիւն պատգամեցին: Մարգարէներ՝ դատապաշտպան ռազմիկները ի խնդիր Եհովա միակ աստուծոյ պաշտամունքին երկրի վրայ վերջնական հաստատումին՝ դժուարութիւններու առջեւ չընկրկեցան ոչ ալ տկարացան: Մարգարէներ՝ կրօնական արդար պայքարի անձնագոհ մարտիկներ, իրենց ցեղի խղճմտանքի բարոյական ձայնը, քաղաքական հրապարակ իջած՝ անտեղիտալի մաքառեցան ընկերային եւ բարոյական շահագործումներու թէ ապականութեանց դէմ եւ բարձրադաշակ յուսադրեցին ազգը վերայարութեան տեսիլքով, միաժամանակ կանխազգուշացուցին ապագայ գալիք Մեսիայի մասին եւ բարոյալքուած խառնիճաղանձ հասարականութեան ուղղութիւն եւ արեւելում տուին: Մարգարէական յայտնատէս գրականութիւնը, ազգային, քաղաքական եւ կրօնական տազնապնդեցի ծնունդ առած, հանդիսացաւ եբրայեցի ժողովուրդին հոգեկան ամենէն պայծառ ստեղծագործութիւնը որ զիրենք դուրս բերաւ աշխարհագրական նեղ սահմաններէն եւ վերածեց համամարդկային արժէքներով հարստացած ժողովուրդի մը:

Որպէս վերջաբան կարելի է եզրակացնել, թէ Հին Ուխտի 9էն 12րդ պատմական Գիրքերու մաս կազմող չորս այլ գիրքերը՝ Ա. եւ Բ. Սամուէլի ու Թագաւորացի երկու գիրքերը, անոնց պատմական ժամանակագրական իրողութիւններու, դէպքերու եւ գործող դէմքերու ետին՝ Աստուծոյ անբեւոյթ ձեռքն է որ իրեն յատուկ եղանակներով, ընտրեալ քահանայ-թագաւոր-առաջնորդ-տեսանող-մարգարէներով կամ միջոցներով կը պատգամէ, կը գործէ՝ բարոյական առաջնորդութիւն ներշնչելու եւ խաթարուած ընկերային կարգն ու սարքը վերահաստատելու, բայց մանաւանդ՝ եբրայեցւոց բացարձակ հնազանդութիւն եւ հաւատարմութիւն պարտադրելու Եհովա Աստուծոյ Միաստուածեան կրօնի պաշտամունքին իրենց ազգային թէ անհատական ուխտի պարտաւորութիւններուն: Աւելին՝ այս գիրքերը, լոկ ժամանակագրական դէպքեր արծարծող եւ հերոս-անհատներ նկարագրող, ազգային-հաւաքական թէ անհատական մեղանշումներ թուարկող պարզ պատումէ մը անդին անցնելով եւ հաստատուած երկրաւոր (Դաւիթի) ժամանակաւոր թագաւորութեան մը պատմական եղելութիւններու սահմաններէն ալ վեր ու անոնց ետին կանգող՝ գալիք հոգեւոր, ճշմարիտ եւ յաւիտեանական թագաւորութեան մը հաստատման՝ Փրկիչ եւ ազատարար Մեսիայի մը յոյսը կ'նւրուագծեն:

Արդարեւ՝ վերահաս ամէն չարիքներու եւ ազգային բոլոր տեսակի դժբախտութեանց պատճառ— թագաւորութեանց կործանումը, աքսոր եւ գերութիւն— Մարգարէներու կողմէ որպէս բնական դատաստան եւ հետեւանք կը

նկատուէին, թագաւորներու օրինագանց ապիկարութիւնը, ընկերային անարգարութիւնն ու յոռի մոլութիւնները, ինչպէս նաեւ ժողովուրդին կրօնական պարտաւորութեանց մէջ կամաւ թերացումը, ի մասնաւորի՝ Եհովայ ճշմարիտ Աստուծոյ պաշտամունքի հանդէպ անհաւատարմութիւնը, ի վերջոյ Աստուծոյ արդար ցասումը եւ անողորմ դատաստանը իրենց վրայ պիտի հրաւիրէին:

Ահաւասիկ, յայտնապէս մարգարէներ՝ Ամովս, Ովսէէ, Միքիէ, Եսայի, Երեմիա, կանխատեսական հարուստ գրական էջերով եւ պատկերաւոր գեղեցիկ ոճով, աստուածախօս նախագուշակութիւններով, կործանած եւ գերեալ ազգի մը յարութիւնը բայց մանաւանդ՝ անոր երկրաւոր թագաւորութեան աւերակներուն վրայ գալիք հոգեւոր նոր կեանքի մը եւ յաւիտեանական Թագաւորի մը մասին է որ պատմական այս գիրքերուն ընդմէջէն կը պատգամեն, կը հաւաստիացնեն եւ կը յուսադրեն տարագիր ժողովուրդը:

Նիւ Եորք

(Շար. 6)

ՄԻԻՌՈՆ Ծ. ՎՐԴ. ԱԶՆԻԿԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

**Ջարեմ Եպս. Ազնաւորեան**

**ԱՍՏՈՒԱԾԱԾՈՒՆՉ**

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻԻՆ ԵՒ ՍԵՐՏՈՂՈՒԹԻԻՆ**

Հրատարակութիւն

Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ

ՄՈՆԹՐԷԱԼ, 2004

# ԿԱՆԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԸ

## Դ. ԿԱՆԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Վերելում շարադրուած ներածականից յետոյ՝ կնոջ քահանայազործման արգելքները կարելի է հիմնաւորել հետեւեալ կարգով.

1. Քրիստոսի քահանայութիւնը սկիզբ է առնում իր մարմնաւորումից եւ այնուհետեւ՝ իր գոհաբերումից: Նա իր կրած չարչարանքների պատճառով է անուանուում «յաւիտեանների քահանայապետ» եւ ոչ թէ ի սկզբանէ ունէր այդ պաշտօնը<sup>(39)</sup>:

Նրկիական Հանգանակում ասուած է Տիրոջ մասին. «Մարմնացաւ, մարդացաւ», որն հասկացում է՝ մարդկային մարմին առաւ ու տղամարդ եղաւ (homo et vir factus es):

Մարմնացած Յիսուսը շատ պարզորոշ կերպով հանդէս է գալիս տղամարդու կերպարանքով եւ ոչ իբրեւ խառնուրդ մարդկային երկու սեռերի, կամ՝ իբրեւ անսեռ: Ինքնին արդէն մարմնացումը նկատի ունի մարդկային չափաւորութեան մէջ մտնելը, որը ծանօթ է միայն երկու ձեւով. կամ իբրեւ տղամարդ եւ կամ էլ՝ իբրեւ կին: Յիսուսի պարագայում, սակայն, այս չի նշանակում, թէ կինը դուրս է մղուում նրա մարմնաւորման խորհրդից, կամ թէ տղամարդու կերպարանքով մի Փրկիչ չի կարող փրկել կնոջը՝ համաձայն այն ենթադրութեան, թէ մարմնացած Աստուածը փրկում է միայն այն, ինչ որ իր մարմնաւորումով ստանձնում է: Այս տրամաբանութեամբ կարելի է ասել նաեւ, թէ Յիսուս չի կարող փրկել ամուսնացածներին, քանի որ ինքը ամուսնացած չէր, չի կարող փրկել ձերերին, քանի որ ինքը ձերութեան չհասաւ:

Իրականում, սակայն, երբ Աստուածորդին մարմնանում է, սա ինքնին արդէն նշանակում է, թէ ներքնապէս (եւ ոչ թէ արտաքին նշաններով) իր էութեան մէջ է կրում այն բոլորը, որ մարդկային է, բացի մեղքից: Նա մարմին է առնում կնոջից՝ Ս. Կոյսից: Եղեմական Դրախտում կինն է, որ կազմուում է Ադամի կողոսկրից, մինչդեռ նոր ստեղծագործութիւնում՝ երկրորդ Ադամը՝ Քրիստոսը, մարմին է առնում կնոջից: Հետեւաբար, Տիրոջ մարմինը գալիս է կնոջից, բայց առանց նոյնանալու իգական սեռի հետ: Այս նշանակում է, որ նա Փրկիչն է թէ՛ տղամարդկանց եւ թէ՛ կանանց եւ, ընդհանրապէս, ողջ ստեղծագործութեան:

Քրիստոս իր 12 աշակերտներին ընտրելիս ոչ մի կնոջ նրանց կազմում չի ընդունում: Նրանց ընտրելուց առաջ ամբողջ գիշերը անցկացնում է Աստուծոն աղօթելով (Ղկ. 6.12): Նա ասում է. «Ես ձեզ ընտրեցի եւ ձեզ կարգեցի»<sup>(40)</sup>: Այդ պատիւը, ինչպէս առաքեալն է ասում, «ոչ թէ որեւէ մէկն ինքն իրենից է առնում, այլ նա, ով Աստուծու է կանչուած, ինչպէս որ՝ Ահարոնը»<sup>(41)</sup>: Այդ պատիւը կայանում է Քրիստոսից ստացած իշխանութեան մէջ՝ խորհուրդները կատարելու, պիղծ

ողիները հանելու, մեղքերը կապելու եւ արձակելու, Աւետարանը քարոզելու<sup>(42)</sup>:

Տասներկու առաքեալները ոչ միայն խորհրդանշական կերպով ներկայացնելու էին Իսրայէլի 12 ցեղերին, այլեւ, ամենից առաջ ներկայացնելու էին նոյնինքն Յիսուսին. «Ինչպէս իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ուղարկում եմ ձեզ»<sup>(43)</sup>, «Ով որ ձեզ լսում է, ինձ է լսում, եւ ով որ ձեզ է անարգում, ինձ է անարգում»<sup>(44)</sup>: Նրանք Վերջին Ընթրիքի ժամանակ պատուէր են ստանում Յիսուսից յաւերժացնելու Ս. Հաղորդութեան խորհուրդը իբրեւ նրա յիշատակի համար արուող խորհուրդ: Այս դէպքում խորհրդակատարը անմիջականօրէն պէտք է Տիրոջ անձը ներկայացնէր:

Նրանք, ովքեր թոյլատրում են կանանց քահանայութիւնը, հետեւեալ կերպ են պատճառաբանում այդ. Քրիստոս ապրեց հրէական միջավայրում, որտեղ կինը այն ժամանակ ստորադնահատուած էր. հետեւաբար Քրիստոս էլ, յարմարուելով այդ միջավայրին, միայն տղամարդկանց ընտրեց: Մենք արդէն վերեւում տեսանք, թէ Քրիստոս խախտեց կնոջ նկատմամբ հրեաների դրած օրէնքներն ու աւանդութիւնները: Միւս կողմից, եթէ ընդունում ենք, որ մեր Տէրը յանուն ճշմարտութեան եւ արդարութեան նոյնիսկ խաչ բարձրացաւ, մի՞թէ ճշմարտութեան եւ արդարութեան Իշխանը պիտի զլանար արդար լինել կանանց նկատմամբ: Եթէ յարմար լինէր կանանց քահանայագործութիւնը, Ս. Մարիամ Աստուածածնից աւելի արժանաւոր մէկը կարո՞ղ էր գտնուել: Սակայն Յիսուս նրան էլ չտուեց այդ իշխանութիւնը, հետագայում նոյնիսկ առաքեալներն էլ այդ բանը չարեցին, թէեւ պէտք է ընդունենք, որ նրա իսկական Աստուածամայր լինելու պատիւը աւելի բարձր է խորհրդանշական քահանայութիւնից:

2. Առաքելական շրջանը նոյնպէս չի կարող մեզ մի նպաստաւոր փաստ տալ կանանց քահանայագործութեան մասին: Այստեղ էլ ժամանակակից մտայնութեան կատարած դերը բացառուում է: Գոյութիւն ունեն սարկաւազուհիներ, սակայն նրանցից ոչ ոք չի կոչուում քահանայութեան, նոյնիսկ Յուդայի փոխարինելու համար՝ առաքեալները ընտրում են Մատթիային՝ տղամարդկանց շրջանակից: Պօղոս առաքեալն ասում է. «Խտրութիւն չկայ ո՛չ հրեայի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի եւ ո՛չ ազատի, ո՛չ արուի եւ ո՛չ էգի. որովհետեւ դուք ամէնքդ մէկ էք ի Քրիստոս Յիսուս»<sup>(45)</sup>: Այս հատուածը առնչուում է այն միութեան, հաւասարութեան եւ ներդաշնակութեան հետ, որով օժտուած են Քրիստոսի մեղքի դատապարտութիւնից փրկուածները: Այս հատուածը մեծագոյն ապացոյցն է նաեւ Պօղոս առաքեալի ունեցած ըմբռնումների՝ տղամարդու եւ կնոջ հաւասարութեան վերաբերեալ, իսկ երբ նա կնոջը լուութիւն եւ հնազանդութիւն է պատուիրում, նկատի է առնում նրա քահանայագործութեան եւ Քրիստոս-եկեղեցի յարաբերութեան հարցը:

Միաժամանակ պէտք է ասել, թէ Պօղոս առաքեալի վերոյիշեալ արտայայտութիւնը, թէ՛ խտրութիւն չկայ ո՛չ արուի եւ ո՛չ էգի, իսկապէս մի ցնցող նորութիւն էր քրիստոնէական նախնական համայնքում եւ ընդհանրապէս հրէական միջավայրում, ուր քահանայութիւնը վերապահուած էր միայն

տղամարդուն: Շատերը դրանով են արդարացնում կանանց քահանայական ձեռնադրությունը, մինչդեռ այդ արտայայտությունը ցոյց է տալիս, թէ հաւատացեալների միությունը պէտք է հիմնուած լինի ցեղային, հասարակական եւ սեռային հաւասարութեան վրայ: Այդ հաւատացեալները կազմում են Քրիստոսի եկեղեցին, իսկ «ու՛մ որ Աստուած կարգեց եկեղեցու մէջ, սրանք են. նախ՝ առաքեալներ, երկրորդ՝ մարգարէներ, երրորդ՝ ուսուցանողներ, ապա՝ զօրաւոր գործեր կատարելու շնորհներ, ապա՝ բժշկելու շնորհներ, տեսակ-տեսակ լեզուներ խօսելու շնորհներ: Միթէ բոլո՞րն էլ առաքեալներ են. միթէ բոլո՞րն էլ մարգարէներ են. միթէ բոլո՞րն էլ ուսուցանողներ են. միթէ բոլո՞րն էլ զօրութիւններ գործողներ են. միթէ բոլո՞րն էլ լեզուներ են խօսում»<sup>(46)</sup>: Ամէն ինչ այստեղ շատ պարզ է. Տիրոջ հանդէպ ունեցած հաւատի շնորհիւ միաւորուած, մէկ մարմին դարձած հաւատացեալներ պահում են իրենց անհատական յատկանիշները եւ ոչ թէ ձուլուած հաւասարութեան մէջ, այլապէս անդէմ, անսեռ ու անհատականութիւն չունեցող անդամներով կազմուած մի հաւաքականութիւն կը դառնայ հրէշային եւ կործանարար: Դրա լաւագոյն ապացոյցներից էր այն տիուր պարագան, երբ փորձ էր արւում ստեղծելու սովետական տիպի մարդուն (homo sovieticus) ստրուկ, անդէմ եւ նոյնիսկ կարելի է ասել՝ անսեռ:

Հոգեգալստեան ժամանակ Սուրբ Հոգին իջնում է թէ՛ տղամարդկանց եւ թէ՛ կանանց վրայ, սակայն բոլորի միջից միայն «Պետրոսը, տասնմէկի հետ վեր կենալով, բարձրացնում է իր ձայնը եւ խօսում նրանց»<sup>(47)</sup>:

Մենք տեսանք, որ կանայք էլ շրջում էին առաքեալների հետ եւ իրենց մասնակցութիւնը բերում աւետարանչական գործին: Այդ գործը կատարւում էր ոչ միայն Հրէաստանում, այլեւ այն քաղաքներում, որտեղ թափանցած էր յունահռոմէական քաղաքակրթութիւնը եւ որտեղ, հետեւաբար, երբայական մտայնութեանը տուրք չէր կարող տրուել: Այդ քաղաքներում եւ շրջաններում գոյութիւն ունէին բազմաթիւ հեթանոսական տաճարներ՝ աստուածուհիներին նուիրուած, որտեղ պաշտօնավարում էին քրմուհիներ: Հեթանոսութիւնից դարձած քրիստոնեաներին բնաւ խորթ պիտի չթուէր, եթէ առաքեալներն իրենց համայնքների համար կին քահանաներ ձեռնադրէին: Սակայն այդ մէկը չարուեց, որպէսզի երբեք չաղարտուի Քրիստոսից աւանդուած նոր քահանայութեան կարգը, թէեւ ուրիշ հարցեր, ինչպէս թլփատութեան հարցը, պարտադիր չնկատուեցին նորագործ քրիստոնեաների համար:

3. Ուղղափառ եկեղեցում քահանան լոկ մի ծիսակատար կամ պարզ պաշտօնակատար չէ. այլ նա՝ առաքելական յաջորդականութեամբ եւ իշխանութեամբ, հոգեւոր մի կարգ ունի՝ ներկայացնելու Քրիստոսին երկրի վրայ, յատկապէս սուրբ Պատարագի խորհրդի ընթացքում: Այս իմաստով էլ նա աղաչում է Քրիստոսին. «Բաւականացո՛ւ զիս զօրութեամբ Սուրբ Հոգւոյդ, որ զգեցեալ եմ զհաւանայական շնորհ, կալ առաջի սրբոյ սեղանոյս եւ փառանայագործել զքո անարատ մարմինդ եւ զպատուական արիւնդ»<sup>(48)</sup>: Թէեւ խորհրդանշաբար քահանան է գոհաբերողը, սակայն խորքում Քրիստոսն է. որ «մատուցանէ,

մատչի, ընդունի եւ տայ»<sup>(49)</sup>: Իւրաքանչիւր խորհրդանիշ Ֆիզիքական կամ շօշափելի նմանութիւններով ներկայացնում է ինչ որ աներեւոյթ խորհուրդ-քահանան պատարագելիս, որպէս երեւելի նմանութիւն, հանդէս է գալիս Քրիստոսի փոխարէն: Այդ նմանութիւնը Ֆիզիքականօրէն համապատասխանում է մարդացեալ Աստուածորդուն, որովհետեւ նա էլ իր հերթին խորհրդանշելով Աստուած-ժողովուրդ յարաբերութիւնը, որպէս փեսայի ու հարսի միջեւ եղած մտերմութիւն, բնականօրէն ունի փեսայի կերպարանք:

4. Երրորդ կէտը ճիշդ ըմբռնելու համար պէտք է խօսել նախ կնոջ եւ տղամարդու տարբերութեան մասին եւ ապա մատնանշել, թէ ինչո՞ւ մեր Տէրը Յիսուս, որպէս մարմնացեալ Աստուածորդի, աշխարհին յայտնուեց տղամարդու կերպարանքով:

Կնոջ եւ տղամարդու տարբերութիւնը աւելի սեռական տարբերութիւն է: Կին լինել նշանակում է ունակութիւն ունենալ մայր լինելու, իր մարմնի մէջ կենդանի պտուղ կրելու, այն աճեցնելու եւ լոյս աշխարհ բերելու: Կնոջ սոյն դերը նման է հողի կամ երկրի կատարած դերին, դրա համար էլ հողը կոչուում է նաեւ «մայր»: Բացի դրանից, նախամարդը կոչուում է հողածին, քանի որ Սուրբ Գիրքը վկայում է, որ Աստուած նրան հողից ձեւաւորեց<sup>(50)</sup>: Սրան հակառակ, տղամարդ լինել նշանակում է գլուխ լինել, այսինքն՝ որպէս սկզբունք, կնոջը պտղաբերութեան մղել: Տղամարդ եւ կին. երկու համահասարակներ, որոնք տարբեր պարտականութիւններ ունեն, մէկը միւսի դերը չի կարող կատարել: Եւ այս կարգաւորութիւնը աստուածային ստեղծագործութեամբ է պայմանաւորուած:

Ֆիզիքականօրէն տղամարդու եւ կնոջ միացումով է պայմանաւորուած ծնունդը մարդկային մի նոր էակի: Եբրայական մտածելակերպը այդ միացման համար օգտագործում է «եադա» բառը, որ նշանակում է ճանաչել. օրինակ՝ Ագամը ճանաչեց իր կնոջը՝ Եւային...<sup>(51)</sup>: Այդ բառը ոչ թէ պարզ մի ճանաչում է արտայայտում, այլ՝ մարդկային լեզուով անբացատրելի մի ճանաչում, որով գոյանում է ներաշխարհային մի եզակի մտերմութիւն, այն աստիճան, որ «եղիցի երկո՞քան ի մարմին մի»: Քրիստոնէական կրօնն էլ այդ ամուսնական միութիւնը հասկանում է որպէս մի մարմին, որի գլուխը տղամարդն է, որովհետեւ կնոջ արգանդում ձեւաւորուում է մարմինը եւ մարմնական մասը կարելի է ասել որ կնոջն է վերաբերում: Դրա համար էլ Պօղոս առաքեալն ասում է. «Նոյն ձեւով եւ մարդիկ պարտաւոր են սիրել իրենց կանանց, ինչպէս իրենց մարմինները. ով սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում»<sup>(52)</sup>:

Աստուած կոչում է մարդկութիւնը միութեան մէջ իր հետ լինելու. դրա համար էլ նա ուխտ է կապում մարդկանց հետ, որպէսզի ուխտի պահպանութեամբ նրանք ճանաչեն յաւիտենական կեանքի աղբիւրը՝ Աստծուն: Միութեան այս ուխտը խորհրդաւորաբար մարգարէների կողմից ներկայացուում է որպէս փեսայի եւ հարսի միջեւ գոյութիւն ունեցող մտերիմ սէր (տե՛ս Ովս 2.16 Եր 2.2): Հին Կտակարանում «Երգ Երգոց» գիրքը դրա մեծագոյն վկայութիւնն է: Այն հեղինակութիւն է վայելում նաեւ քրիստոնէական եկեղեցում, եւ նրանից ընթերցումներ են

կատարում արարողութիւնների ժամանակ: Հարսը, հակառակ իր յաճախակի անհա-  
ւատարմութեանը, նորից վայելում է Աստու, այսինքն՝ փեսայի գլխարկութիւնը:  
Նմանապէս Աստուածորդին ներկայացւում է որպէս փեսայ: Այդ բանը Քրիստոս  
ինքն էլ է վկայում: Երբ փարիսեցիները հարց են տալիս նրան, թէ ինչո՞ւ իր աշա-  
կերտները պատ չեն պահում, նա պատասխանում է. «Միթէ կարելի՞ է, որ հարսան-  
փառքները պատ պահեն, երբ փեսան նրանց հետ է»<sup>(53)</sup>: Իսկ Յովհաննէս Մկրտիչն  
ասում է. «Դուք ինքներդ էք վկայում ինձ, որ ձեզ ասացի՝ ես Քրիստոսը չեմ, այլ  
ուղարկուած եմ նրա առաջից: Ով հարս ունի, նա՛ է փեսան. իսկ փեսայի  
բարեկամը, որ կանգնած լսում է նրան, մեծապէս ուրախանում է փեսայի ձայնի  
համար. արդ, այս ուրախութիւնը, որ իմն է, կատարեալ է: Պէտք է, որ նա աճի, իսկ  
ես՝ նուազեմ»<sup>(54)</sup>: Այս մասին կարդում ենք նաեւ Յայտնութեան գրքում: «Ալէ-  
լուիա. քանզի թագաւորեց մեր ամենակալ Աստուածը: Ուրախանանք եւ ցնծանք ու  
փառք տանք նրան քանզի որ հասաւ Գառան հարսանիքը, եւ կիւր՝ նրա հարսը,  
պատրաստուեց, ու նրան տրուեց հագնելու սպիտակ, մաքուր եւ լուսափայլ բեհեզ.  
եւ այդ բեհեզը սրբերի արարուածութիւնն է»<sup>(55)</sup>: Պողոս առաքեալը գրում է. «Որովհե-  
տեւ ձեզ նշանեցի մի մարդու՝ որպէս մի սուրբ կոյս՝ Քրիստոսին ներկայացնելու  
համար»<sup>(56)</sup>: Ինչպէս երեւում է, նա էլ Քրիստոսին նկատի ունի որպէս փեսայի:

Մարդու անկման հետեւանքով լքուած եւ մեղքերի մէջ ընկղմուած հարսը  
մաքրագարուում է Քրիստոսի կողմից եւ դառնում «հարսնացեալ սուրբ Եկեղեցի  
Քրիստոսի»: Այս մասին արեւելա-սիրիական Եկեղեցու ծիսական տեքստերում  
հանդիպում ենք հետեւեալ պատկերին. «Նա (Քրիստոս) զգեստաւորեց քեզ  
հրաշալի եւ անշէշ լոյսի հանդերձով, եւ քո գլուխը պսակեց փառահեղ ու  
ճառագայթող թագով»: «Ո՛վ Եկեղեցի, թագաւորի սուրբ հարս, չկայ գեղեց-  
կութիւն, որ կարողանայ չափուել քո գեղեցկութեան հետ»<sup>(57)</sup>:

Ինչպէս կինը գոյութիւն է առել Ադամի կողոսկրից եւ դրա համար էլ  
կոչուում է իր ամուսնու կողակիցը, այդպէս էլ Եկեղեցին հիմնուած է Քրիստոսի  
կողից բխած վտակից, որի մասին մեր Ներսէս Շնորհալի հայրապետն ասում է.  
«Կրկնավտակ կողին աղբերք գեղեցիցի իւր հաստատի»<sup>(58)</sup>: Կողակից լինել  
նշանակում է մտերմութեան եւ միութեան մէջ լինել: Նախաստեղծ տղամարդու  
եւ կնոջ կողակցութիւնը միութեան մի խորհուրդ էր, որին անդրադառնալով  
առաքեալն ասում է. «Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի եւ  
Եկեղեցու վերաբերեալ»<sup>(59)</sup>: Ուրեմն Ադամն ու իր կողակիցը աստուածային  
տնօրինութեամբ իրենց անմեղութեան մէջ միացան: Թէեւ նրանք կորցրին իրենց  
անարատութիւնը, սակայն շնորհով արժանի եղան ունենալու իրենց յաջորդները,  
բայց նրանց ժառանգ տուեցին մեղքը: Երկրորդ Ադամը հաստատեց եւ հաստա-  
տում է իր կողակցին՝ Եկեղեցուն անարատութեան մէջ, որովհետեւ նա «սիրեց  
Եկեղեցին եւ իր անձը մատնեց նրա համար, որ այն սրբացնի աւագանի  
մաքրութեամբ՝ խօսքով»<sup>(60)</sup>: Այդ խօսքը ապակհանութեան չենթարկուող սերմն է՝  
Աստու կենդանի եւ մշտնջենական խօսքը<sup>(61)</sup>:

Պողոս առաքեալը տղամարդու եւ կնոջ յարաբերութիւնները համեմատելով  
Քրիստոսի եւ Եկեղեցու միջեւ եղածի հետ՝ արդարօրէն յայտարարում է, թէ դա մի

մեծ խորհուրդ է (Mysterium magnum) եւ այդպիսով պէտք է հասկնալ նաեւ մարդկանց անդամ լինելը Քրիստոսի մարմնի. «Քանզի անդամներ ենք նրա մարմնին՝ նրա մարմնից եւ ոսկորներից»<sup>(62)</sup>, կամ «եւ դուք մարմին էք Քրիստոսի եւ անդամներ նրա անդամներից»<sup>(63)</sup>: Քրիստոս, որպէս փեսայ, իր մարմինը պատարագեց՝ ասելով. «Առէ՛ք, կերէ՛ք, այս է մարմին իմ»: Նա իր անարատ մարմնով, իր մարմնի անարատութեան մէջ հաստատեց իր կողակցին: Նմանապէս եւ քահանան, որպէս խորհրդանիշը երկնաւոր սուրբ Փեսայի, «հարսնացեալ սուրբ եկեղեցին» զոհաբերման խորհրդով միացնում է Փեսայի մարմնին: Դրա համար էլ անհրաժեշտ է, որ նա արտաքնապէս փեսայի կերպարանքով հանդէս գայ: Եւ սա մի «մեծ խորհուրդ» է, միաժամանակ աստուածադիր կարգաւորութիւն, որի հանդէպ մարդկային մեր նախասիրութիւններն ու նոր ժամանակներին յարմարուելու մեր նկրտումները բոլորովին անտեղի են եւ անիմաստ:

5. Պէտք է ասել, որ գոյութիւն ունի Քրիստոսի հաւատացեալների համընդհանուր քահանայութեան մի հասկացութիւն, որի մէջ, ի հարկէ, ընդգրկուած են նաեւ բոլոր հաւատացեալ կանայք: Այդ հասկացութեան հիմք է ծառայում Պետրոս առաքեալի ասածը. «Բայց դուք ընտիր ցեղ էք, թագաւորութիւն, քահանայութիւն, սուրբ ազգ, Աստուծոյ սեփական ժողովուրդ»<sup>(64)</sup>, այսինքն՝ իւրաքանչիւր քրիստոնեայ հաւատացեալ, լինի դա կին թէ տղամարդ, ինքնին, իր մարմնի զոհաբերումով, մասնակից է այն քահանայութեան, որի գլուխն է Յիսուս Քրիստոս. դրա համար էլ Պօղոս առաքեալը գրում է. «Աղաչում եմ ձեզ, եղբայրներ, գթութեամբ Աստուծոյ, որ պատրաստէ՛ք ձեր մարմինները որպէս պատարագ կենդանի, սուրբ, հանելի՛ Աստուծուն. այդ է ձեր բնական պաշտամունքը»<sup>(65)</sup>: Այստեղ սակայն, «մարմնի պատրաստումը որպէս կենդանի պատարագ կամ գոհ», նկատի ունի հաւատացեալի ներքին մաքրագործումը, մարմինը մեղքերի համար խաչելը, եւ ոչ թէ՛ մարմինը իբրեւ փրկութեան զոհ մատուցելը, քանզի այդ իմաստով միակ եւ յաւիտենական զոհը Յիսուսն է, իսկ հաւատացեալի ամբողջ կեանքը մի ձգտում է միանալու եւ մասնակցելու նրա զոհաբերման խորհրդին, որը Ս. Պատարագի մատուցմամբ Տիրոջ մշտական ներկայութիւնն է այս աշխարհում: Այսպիսով, հաւատացեալների ընդհանուր քահանայութիւնը նշանակում է՝ մահ մեղքի համար եւ կեանք ի Քրիստոս, վերատին ծնուելով իբրեւ Աստուծոյ որդիներ ու վկաներ նրա փառքի: Դա հիմնականում խտացուած է մկրտութեան խորհրդում, որի շնորհիւ հաւատացեալները հաւաքաբար անդամակցում են Քրիստոսի խորհրդաւոր մարմնին եւ, հետեւաբար, նրա քահանայապետութեան փառքին:

Ընդհանուր առումով պարզ է դառնում, թէ՛ հաւատացեալների ընդհանուր քահանայութիւնը՝ դա հէնց ինքն Քրիստոսի եկեղեցին է, որ տարբերում է սպասարկու կամ խորհրդակատար քահանայութիւնից նրանով, որ ինքն է մասնակցողն ու ընդունողը Տիրոջ զոհաբերման խորհրդին: Այդ ընդհանուր քահանայութեան միջից ընտրուած է պաշտօնակատար քահանան, որն առաքելական յաջորդականութեամբ իշխանութիւն է ստանում առաջնորդ դառնալու

քահանայացած ժողովրդին եւ նրա փրկութեան համար մատուցելու Ս. Պատարագ՝ փոխարինաբար ներկայացնելով Քրիստոսին:

Եզրակացնելով՝ պէտք է ասել, որ այսօր, կանանց քահանայագործման պահանջի հարցում նկատելի են երկու հիմնական սխալներ: Առաջինը այն է, որ շփոթութիւն կայ Քրիստոսի հաւատացեալների ընդհանուր քահանայութեան ըմբռնումի եւ ծառայական քահանայութեան միջեւ: Իսկ երկրորդն այն է, որ մի շարք կանանց մօտ գոյութիւն ունի այն նախապաշարումը, ըստ որի՝ երբ միայն տղամարդկանց է վերապահուած սպասարկու քահանայութիւնը, ուրեմն իրենք դրանով հասարակական կեանքում ոտնահարուած են զգում իրենց կանացի իրաւունքները: Բայց մի՞թէ իսկական քահանայութիւնը նշանակում է հասարակական բարձր դիրքերի տիրացում կամ ազնուականի կոչման ձեռք բերում. ո՛չ, բոլորովին ո՛չ, այլ այն իր ամբողջական իմաստով միայն ու միայն ծառայութիւն է Աստծուն, աստուածային խորհուրդներին եւ ժողովրդին: Առաջնակարգ դիրքերի ձգտող ու ազնուականների տիտղոսներ մտերացող քահանայութիւնը ինքնին ժխտումն է քրիստոնէական հասկացողութեամբ ընդունուած քահանայական կարգի:

Միւս կողմից էլ, ինչպէս տեսնում ենք Մինդոց գրքում, Ադամն ու Եւան երբ մեղանշում են, խախտում է իրենց ամուսնական կեանքի ներդաշնակութիւնը, այնուհետեւ, Գիրքն ասում է, թէ՛ կինը պիտի ձգտի իր ամուսնու դիրքին ու իշխանութեանը: Այդ ձգտումը համապատասխանում է մի անէծքի, որը գոյութիւն չունէր մեղանշումից առաջ: Քրիստոսով վերստին հաստատում է ամուսնու եւ կնոջ միջեւ խախտուած համերաշխութիւնը: Հեռանալով կամ շեղուելով Քրիստոսի առողջ ուսմունքից՝ նորից առաջ է գալիս այն մեղսալից մրցակցութիւնը կնոջ եւ ամուսնու միջեւ, որն այս օրերին զրսեւորում է ոչ միայն իրար վրայ իշխանութիւն բանեցնելու մարմաջով, այլեւ ջանալով իւրացնել այն, ինչ որ աստուածային կարգադրութեամբ յատկացուած է սեռերից որեւէ մէկին. այս պարագայում նկատի ունենք սպասարկու քահանայութեան կարգը, որին կոչուած են Տիրոջ կողմից ընտրուած տղամարդիկ: Այստեղ յատուկ կերպով շեշտում ենք սպասարկու կամ պաշտօնակատար քահանայութիւնը՝ այն տարբերելու համար հաւատացեալ քրիստոնեաների համընդհանուր քահանայութիւնից, որին պատկանում են նաեւ բոլոր հաւատացեալ կանայք, որոնք յատկապէս նուիրական պարտականութիւն ունեն նուիրուելու քրիստոնէական դաստիարակութեան սուրբ գործին, բացառութեամբ, ինչպէս նշեցինք, խորհրդակատար քահանայի դեր ստանձնելուց՝ յատկապէս իբրեւ «փեսայ» հանդէս գալուց:

Իրաւական տեսակէտից տղամարդ եւ կին իրար հաւասար լինելով հանդերձ՝ ունեն տարբեր ֆունկցիաներ ու պարտաւորութիւններ: Դժբախտութիւնը նրանումն է, երբ նրանցից մէկն կամ միւսը փորձ է անում դուրս գալ բնութեան կամ Աստծոյ կողմից իրեն յատկացուած կարգավիճակից:

Մոնթեվիտօ

ՅԱԿՈՒ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ  
«Հասկ»

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

- 39.- հմմտ. երբ 5.9-10:
- 40.- Յհ15.16:
- 41.- երբ5.4:
- 42.- Մր6.7-12, Մտ10.8, 18.18. 28.18-20:
- 43.- Յհ 20.21:
- 44.- Ղկ 10.16:
- 45.- Գղ3.28:
- 46.- Ա.Կր12.28-30:
- 47.- Գրծ2.1-14:
- 48.- Պատարագամատոյց, Վաղարշապատ 1880 էջ 11:
- 49.- Անդ, էջ 11:
- 50.- Ծն 2.7:
- 51.- Ծն 4.1. գրաբարն ունի այստեղ «եմուտ», այսինքն՝ մտանել բայը, մինչդեռ եբրայերէնում «ճանաչել» է:
- 52.- Եփ 5.28:
- 53.- Մր 2.19:
- 54.- Յհ 3.28-30:
- 55.- Յյտ 19.7-8:
- 56.- Բ.Կր 11.2:
- 57.- Jacob Vellian (Johannes Madey — Die Kirche in der Sicht der Christenheit des Ostens und des Westens) էջ 99:
- 58.- Ժամագիրք:
- 59.- Եփ 5.32:
- 60.- Եփ 5.26:
- 61.- Ա.Պտ 1.23:
- 62.- Եփ 5.30:
- 63.- Ա. Կր 11.27:
- 64.- Ա. Պտ 2.9, նաեւ՝ Յյտ 5.10: Հին Կտակարանում էլ ակնարկութիւն կայ այս մասին՝ Ելից 19.6. «Եւ դուք ինձ քահանայութիւն եւ մի սուրբ ազգ պիտի լինէք»:
- 65.- Հո 12.1:

# Յակոբ Դ Ջուղայեցի, Ոսկան Երեւանցի Եւ Հայ Աստուածաշունչի Առաջին Տպագրութիւնը <sup>(\*)</sup>

Հայոց պատմութեան մէջ միշտ եղած են երկու դէմքեր, երկու անուններ՝ որոնք իրարմէ անբաժան են եւ առանց իրարու կարելի պիտի չըլլար իրականացնել այն մեծ գործը՝ որ անոնք սկսան եւ լրումին հասցուցին: Մեծ զոյգ դէմքերու շարքէն առաջինը՝ Սահակ Կաթողիկոսն է եւ Մեսրոպ Մաշտոցը: Առանց անոնց միացեալ աշխատանքին՝ մարդկային պատմութեան մէջ մենք տողատակի պարզ նոթ մը կ'ըլլայինք:

Յաւերժ յիշատակելի զոյգ մըն ալ են Յակոբ Դ Ջուղայեցին եւ Ոսկան Երեւանցին:

Այսօր գիրք եւ գրականութիւն հասարակ երեւոյթներ են եւ չենք իսկ մտածեր այն մասին: Սակայն ասիկէ չորս դարեր առաջ, գիրքի տպագրութիւնը հրաշքի համազօր բան էր եւ քիչ էին այն ժողովուրդները, որոնք տպագրուած գրականութիւն ունէին:

Յակոբ Դ. եղաւ այն փոքրաթիւ հայրապետներէն, որոնք երկար տարիներ գահակալեցին: Անոր ժամանակ Հայաստանի մէկ կողմը կը հեծէր Օսմանեան կայսրութեան տակ, իսկ միւսը՝ Պարսկական: Էջմիածինը ենթակայ էր Պարսկական կայսրութեան: Ջուղայեցի կաթողիկոսի արժէքը եւ մեծութիւնը գահակալութեան երկարութենէն կախեալ չէ, այլ գահակալութեան օրերուն իր բազում վաստակէն եւ իմաստուն գործերէն: Իր օրով է, որ առաջին անգամ Հայ Աստուածաշունչը տպագրութեան տրուեցաւ 1666ին, երբ տակաւին շատ մեծ ազգեր եւ ժողովուրդներ տպագրուած գրքոյկ մ'իսկ չունէին, ալ ուր մնաց հսկայածաւալ Աստուածաշունչ մը:

Յակոբ Դ. նաեւ իմաստուն դիւանագէտ մըն էր: Գիտէր օտար քաղաքական անձնաւորութիւններու հետ ինչպէս վարուիլ: Իր նախորդը՝ Փիլիպպոս Ա. Աղբակեցի Կաթողիկոս փորձեց Էջմիածնի Մայր Տաճարին գանգակատուն մը կանգնել: Սակայն այն օրերուն Երեւանի պարսիկ կուսակալը՝ Մահմատղուլի սպառնաց զայն քանդել կառուցուելու պարագային: Ուստի Փիլիպպոս չկրցաւ իր այն երազը իրականացնել: Յակոբ Դ. իր նախորդին չկրցածը՝ ի'նք կրցաւ յաջողցնել, քանի որ Մահմատղուլի յաջորդին՝ Նաջաֆղուլիի հետ լեզու գտաւ:

Արեւելքի մէջ հայերէնով տպագրութեան առաջին փորձը կը պատկանի

---

Ծանօթ. խմբագրութեան — Այս դասախօսութիւնը ներկայացուած է Հ. Ա. Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ, Չորեքշաբթի 31 Մարտին յաւարտ Հսկման արարողութեան: Դասախօսութիւնը վերջինն էր լսարանային ծրագրի մը, որ պատրաստուած էր Գանատայի Ազգային Առաջնորդութեան եւ Ս. Յակոբ Եկեղեցւոյ կողմէ: Նախորդ նիւթերուն ամփոփ նկարագրականները լոյս տեսած են «Հորիզոն» շաբաթաթերթի մէջ:

Խաչատուր Կեսարացիի, սակայն դժբախտաբար արգելենքը գոհացուցիչ չեղաւ: Ան նախապէս Լեհաստանի մէջ կաթողիկոսական նուիրակ էր եւ հոն գտնուած ատեն շատ աշխատեցաւ տպագրութեան գիւտէն օգտուիլ: Եւ երբ Ասպահան փոխադրուեցաւ իբր առաջնորդ, 1640-ին տպարան մը հաստատեց այնտեղ:

Էջմիածնի մէջ ճիգեր եղան տպարան հաստատելու, սակայն ի զուր: Յակոբ Դ. հայ եկեղեցականներ քաջալերեց, որ Եւրոպա երթան եւ իւրացնեն տպագրութեան գործը: Անոնցմէ նշանաւոր եղաւ Մատթէոս Քարեցի սարկաւազը: Ան Վենետիկ հասաւ 1656-ին եւ 14 ամիս ժամանակ անցուց եւ ձեռնու-նայն Հռոմ գնաց: Հոն ալ 8 ամիս ժամանակ կորսնցուց, որովհետեւ պետական արգելք կար գիրք տպելու, նաեւ՝ inquisition-ը տարածուած էր: Այսպէս երկու տարի պարապի անցընելէ ետք 1658-ին անցաւ Հոլանտա՝ Ամստերտամ քաղաք եւ ձեռնարկեց նոր աշխատանքի: Ան պատրաստել տուաւ հայերէն գիրերու կաղապարներ: Դժբախտաբար սակայն իրեն թիկունք կանգնող եւ նիւթապէս սատարող հայ վաճառականներ քիչ էին: Վերջապէս՝ 1660-ին ան սկսաւ տպել տալ Ն. Շնորհալիի «Յիսուս Որդի»ն: Գործը չաւարտած 1661-ի Յունուարին մեռաւ՝ կիսաւարտ ձգելով տպագրութեան գործը:

Գործը յառաջ տանելու համար Յակոբ Դ. Ամստերտամ ուղարկեց Ոսկան Երեւանցին, զինք եպիսկոպոս ձեռնադրելէ ետք: Ոսկան եպիսկոպոս ուշիմ, ուսումնասէր եւ աշխատասէր կրօնաւոր մըն էր: Վեհափառը զինք Ամստերտամ ուղարկեց յատուկ պատուէրով, որ ան Աստուածաշունչը տպէ:

1662-ին Ոսկան Երեւանցի Էջմիածնէ ճամբայ ելաւ դէպի Եւրոպա: Ան դէպի Ամստերտամ իր ճամբուն վրայ զանազան երկիրներ այցելեց, որպէսզի կարենայ դրամ հաւաքել: Միայն 3 հայ վաճառականներ յօժարեցան իրեն դրամ տալ Աստուածաշունչի տպագրութեան նպատակով: Եւ ուզեցին, որ մատենին եկամուտը ծառայէ Էջմիածնի եւ Երուսաղմէի կարիքները հոգալու: Կ'արժէ այն 3 վաճառականներուն անունները յիշել հոս. Ստեփանոս Խանենց, Թէոտորոս Քթրչենց եւ Պետրոս Տէր Աւագեանց: Աստուած անոնց յիշատակը օրհնէ:

Ոսկան եպիսկոպոս տարի մը ամբողջ շրջելէ եւ որոշ գումար մը գոյացնելէ վերջ, 1663-ին հասաւ Ամստերտամ եւ անմիջապէս գործի ձեռնարկեց: Հայերէն գիրեր պատրաստել տուաւ, որոնք աւելի սիրուն էին քան սարկաւազին պատրաստել տուածները: Ան պատրաստել տուաւ նաեւ պատկերներ ու զարդանկարներ: Եւ առաջին Հայ Աստուածաշունչի տպագրութիւնը սկսաւ 1666-ին եւ գրեթէ երկու տարի տեւեց մինչեւ աւարտիլը: Աստուածաշունչը տպուած եւ կազմուած էր 1668-ին:

Ի՞նչ է իմաստը եւ արժէքը այս տպագրութեան: Ինչո՞ւ համար Յակոբ Դ. կ'ուզէր ամէն գնով հայերէն Աստուածաշունչ տպել: Անոր երազն էր ամէն հայ եկեղեցի Աստուածաշունչով օժտել:

Այսօր մեր գոյութեան պատճառը Աստուածաշունչն է եւ եկեղեցին: Եթէ հայը Աստուածաշունչէն եւ եկեղեցիէն հեռանայ՝ կը կորսուի:

ՎԵՐ. ՄԱՆՈՒԷԼ ՃԻՆՊԱՇԵԱՆ

# ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՆՎԱՅԵԼ «ԳՐԱԽՕՍԱԿԱՆ»Ի ՄԸ ՄԱՍԻՆ

Թորգոմ Փօսթանեան գրախօսականով մը հանդէս եկաւ Վեր. Դոկտ. Վահան Թուրքիեանի հեղինակած «Կարեւոր Դէպքեր եւ Դէմքեր Հայ Գրիստոնէութեան Պատմութեան Մէջ» հատորին: Գրախօսականին մէջ արտայայտուած կարգ մը հաստատումներուն համաձայն չըլլալով հանդերձ՝ գայն հրատարակեցինք նիւթին շահեկանութեան համար: Ներկայ գրութեամբ յարգելի հեղինակը կը պատասխանի Փօսթանեանի քննադատութեանց: Անոնց տեսութեանց եւ տուեալ հարցերուն մօտեցումի տարբերութիւնը կը ձգենք բանիմաց ընթերցողներու դատումին:

*Գանատայի Հայ Առաքելական Եկեղեցւոյ Պաշտօնական Երկամսաթերթ «Լոյս»ի Յունուար-Փետրուար (Դ Տարի թիւ 3) 2004 թիւը ստացայ, եւ կարգացի Թորգոմ Փօսթանեանի այսպէս կոչուած «գրախօսականը» իմ «Կարեւոր Դէպքեր եւ Դէմքեր Հայ Գրիստոնէութեան Պատմութեան Մէջ» վերտառութեամբ գիրքին մասին:*

*Ինծի համար մեծ զարմանք եւ յուսախաբուածութիւն պատճառեց ան, որ տեղ տրուած է յօդուածի մը, որ ո՛չ իր բովանդակութեամբ եւ ո՛չ ալ արտայայտած լեզուով պատշաճ է լոյս տեսնելու առաջնորդարանի մը պաշտօնաթերթին մէջ: Ապա, մտաւորական պարկեշտութիւնը կը պահանջէ, որ երբ գիրքի մը մասին գրախօսական կը գրուի, ապա խմբագիրը կարգացած ըլլայ այդ գիրքը, որպէս զի արդարութիւն ըրած ըլլայ գիրքին հեղինակին արտայայտած միտքերուն եւ գաղափարներուն: Վստահ չեմ որ խմբագիրը կարգացած է ինդրոյ առարկայ գիրքը:*

*Թորգոմ Փօսթանեանի «Կոթողական» Գիրք մը, լի՝ Կոթողական Սուտերով» վերտառութեամբ գրութիւնը կարգացող լուրջ ընթերցողը այն եզրակացութեան կը յանգի որ ասիկա գրախօսական չէ, այլ ցեխարձակութիւն: Յօդուածագիրը կը գործածէ այնպիսի նախատական լեզու մը, որ վայել չէ ոչ միայն լուրջ մտաւորականի այլ նաեւ ոեւէ գիտակից եւ պարկեշտ մարդու: Մէկու մը հետ չհամաձայնիլ՝ չի նշանակէր գայն ստախօս կոչել եւ խեղաթիւրումներ եւ անճիշդ վկայութիւններ ընող անձ մը նկատել:*

*Ահա այդ պատճառով է որ Փօսթանեանի գրութիւնը «Լոյս»ի մէջ հիւրընկալելը մեծ յուսախաբուածութիւն պատճառեց ինծի:*

*Յօդուածագիր Թորգոմ Փօսթանեան առաջին անգամ չէ, որ «գրախօսական»ի մը պիտակին տակ, կամ այլ պատճառներով կ'աշխատի իր ներսիդին ամբարած մաղձն ու թոյնը թափել՝ անձերու եւ յարանուանութեանց վրայ, որոնց հանդէպ կարծես բնագրական ատելութիւն ունի:*

*Պիտի չ'ուզէինք պատասխանել իր յօդուածին եթէ իր գրածները ճշմարտութիւն ըլլային: Բայց ընդհակառակը, ան անճիշտ գիտողութիւններ եւ անոնց*

վրայ հիմնուելով՝ անհիմն զրպարութիւններ կ'ընէ, որոնց անհրաժեշտ է պատասխանել:

Անցնինք հիմա Թորգոմ Փօսթաճեանի ըրած դիտողութիւններուն եւ աշխատինք պատասխանել:

## 1. Անտեղի Կասկածամտութիւն

Իր գրութեան սկիզբը ան կը գրէ «Հայկական ժառանգութեան Յանձնախումբ»-ի անունով հաղորդագրութեան մը մասին եւ այն կարծիքը կը յայտնէ թէ այդ անստորագիր գրութիւնը «կրնայ ենթադրել որ Վեր. Վ. Թութիկեան՝ թերեւս ինք իսկ գրած ըլլայ վերոյիշեալ գովասանալից յօդուածը, իր եւ իր գրքի մասին»: Ճշմարտութիւնը այն է, որ այդ յօդուածը երեք անջատ յօդուածագիրներու համախմբուած եւ խմբագրուած ամփոփ վկայութիւնն էր, որ հետագային անջատ յօդուածներով լոյս տեսան զանազան թերթերու մէջ: Թորգոմ Փօսթաճեան կրնայ վստահ ըլլալ թէ՛ Վեր. Թութիկեան եւ իր գիրքերը պէտք չունին ինքնագովութեան: Անոր 45ամեայ վաստակը հանրայայտ իրականութիւն մըն է: Անոր ցարդ հեղինակած գիրքերն ալ ունեցած են իրենց առարկայական գրախօսականները՝ ստորագրուած յարգուած մտաւորականներու կողմէ—գրախօսականներ՝ ոչ այնպէս ինչպէս Փօսթաճեան կը հասկնայ «գրախօսական»-ի մը բնոյթն ու տարողութիւնը:

## 2. Փութիկոտ Դատումներ

Փօսթաճեան կը գրէ որ «գիրքը լեցուն դտանք պատմական անճշդութիւններով եւ խեղաթիւրումներով»: Զարմանալին այն է, որ իր յիշածներէն ոչ մէկը «անճշդութիւն եւ խեղաթիւրում» են: Փօսթաճեան «խեղաթիւրում» կը նկատէ այս գիրքին մէջ յիշուած այն բոլոր բաները, որոնց հետ ինք չի համաձայնիր: Ըստ իրեն, «խեղաթիւրում եւ անճշդութիւն» են այն տեսակէտներն ու թէզերը, որոնք կը տարբերին իր սնուցած գաղափարներէն եւ համոզումներէն: Եւ աւելի մեծ դժբախտութիւնը այն է, որ Փօսթաճեան կը նկրտի անարգել, խժեժել եւ վարկաբեկել Սահակ Արք. Կոզեանի եւ Կարտինալ Աղաճանեանի եւ Վեր. Պարգեւ Տարագճեանի պէս դէմքեր, որոնք իրենց աստուածաբանութեամբ եւ գաղափարախօսութեամբ տարբեր տեսակէտներ ունեցած են Հայ Եկեղեցական պատմութեան նկատմամբ: Փօսթաճեան պէտք է իրագել ըլլայ այն իրողութեան որ խտրական եւ նախապաշարեալ մտքով, անհիմն վարկածներով եւ փութիկոտ դատումներով գրախօսութիւն ընել շիտակ բան չէ: Իրա՛ւ պատմագէտը իր գործին մէջ չի մտցնէր իր անձնական օրակարգը (agenda), իր նախապաշարումները, սէրերն ու ատելութիւնները: Չի գործածեր այն լեզուն որ Փօսթաճեան գործածած է այս յօդուածին մէջ: Ան կոչուած է մէկզի դնելու զգացականութիւն, կիրք ու մաղձ եւ սառնարիւն առարկայականութեամբ դիտելու եւ դատելու է հարցերը:

### 3. Հաւատարմութիւն Գրքի Խորագրին

Փօսթաճեան կը խորհի թէ՛ ես հաւատարիմ չեմ մնացած իմ գրած գրքի խորագրին՝ «Կարեւոր Դէպքեր եւ Դէմքեր Հայ Քրիստոնէութեան պատմութեան մէջ»: Ամէնէն համեստ մտքի տեր ընթերցողն անգամ շատ յստակ կերպով կրնայ տեսնել թէ այս արտայայտութիւնը որչափ հեռու է ճշմարտութենէն, որովհետեւ երբ կը կարգայ սոյն հատորը՝ վերահասու կ'ըլլայ 120է աւելի ականաւոր հայորդիներու եւ հարիւրաւոր կարեւոր իրադարձութիւններու մասին որոնք կերտած են Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը: Ընթերցողը յաճախ կը հանդիպի եկեղեցական եւ կրօնական դէմքերու կողքին քաղաքական եւ աշխարհական դէմքերու (իրենց պատկերներով եւ կենսագրականներով), որոնք իրենց գրողը գրած են մեր ազգային-եկեղեցական կեանքին վրայ: Արդեօք ի՞նչ ի միտի ունի Փօսթաճեան երբ կը գանգատի թէ ես հաւատարիմ չեմ մնացած իմ գրքին խորագրին:

### 4. Անճիշդ Վերագրում

Յօդուածագիրը կը քննադատէ զիս որ նիւթէն շեղած եմ եղեր եւ ինկած՝ «միջ-յարանուանական տարակարծութեան, վէճերու եւ անտեղի վերագրումներու» մէջ: Դարձեալ՝ անճիշդ վերագրում...: Միակ ատենը որ անդրադարձած եմ տարակարծութեանց՝ հայ յարանուանութեան ծագումին կապակցութեամբ եղած է: Այդ ալ, այն պատճառով որ ջանացած եմ պատմական հակիրճ ակնարկով նշել այն շարժախիթներն ու պարագաները, որոնք պատճառ հանդիսացան յարանուանութեանց բաժանումին: Եկեղեցիներու ծագման ու զարգացման մասին գրած ատեն գրեթէ անհնար եւ անխուսափելի է չգրել անոնց դրական կէտերու կողքին նաեւ ժխտական կողմերու մասին:

### 5. Ծիւնճո՞ւ թէ Իրաւ Պատմութիւն

Փօսթաճեան չի հաւատար, որ օտար պատմագէտներու կողքին՝ կան նաեւ հայ պատմաբաններ, որոնք կը մերժեն Հայ Եկեղեցւոյ Առաքելական ծագումը: Ան հարց կու տայ թէ՛ որո՞նք են «այդ շինծու անանուն հայ պատմաբանները»: Այստեղ յիշենք միայն քանի մը հանրածանօթ անուններ. Տե՛ս Ս. Մալխասեանց, «Խորեմացու Առեղծուածին Շուրջը» (Երեւան, 1940, էջ 496-7), Մ. Գարագաշեան, «Քննական պատմութիւն Հայոց, Ա.-Գ» (Կ. Պոլիս, 1880, էջ 64), եւ Մ. Աբեղեան, «Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն, Ա.» (Պէյրուս, 1955, էջ 360-362):

Ապա, ինքզինք հակասող յաջորդ պարբերութեան մէջ կը գրէ. «Եթէ Վեր. Վ. Թութիկեան իր յիշատակած Հարիւրաւոր աղբիւրներէն (ընդգծումը, մեզմէ) կարգացած ըլլար միայն Օրմանեան Սրբազանի «Հայ Եկեղեցի» գիրքին՝ Բ. գլուխը, իր մտքին մէջ բնաւ տարակոյս պիտի չմնար որ Հայաստանեայց Եկեղեցին արդարեւ «Առաքելական ծագում ունի»: Եթէ ան լրջօրէն հետեւէր իմ օգտագործած աղբիւրներու ցանկին, պիտի տեսնէր որ քանի-քանի անգամներ յիշած եմ Օրմանեանի անունը այդ կապակցութեամբ: Բայց, Փօսթաճեան

մտահան կ'ընէ այն պարագան, որ, պարկեշտ պատմագիրը անհրաժեշտ է որ ներկայացնէ տարբեր տեսակէտներ իր նիւթին մասին, ինք՝ անոնց համաձայն ըլլայ կամ ոչ: Արդար չէ որ ան անգիտանայ թեզ մը որ իր թեզէն տարբեր է: Հարցերը անաչառ կերպով քննել եւ զանոնք առարկայականօրէն ներկայացնել ամէն պատմագէտի անզանցառելի պարտականութիւնն է:

## 6. Պատշաճութեան Սահմաններ

Ըստ Փօսթաճեանի, մեր ականդական «անգիր պատմութիւնը նոյնքան ճիշդ է եւ վաւերական որքան գրաւոր պատմութիւնը...զանոնք «ուրանալը համազօր է հայութիւնը ուրանալու»:

Հարց կու տանք թէ՛ այլեւս կարիք կա՞յ մեր քննական պատմութեան: Արդեօք հարկ կա՞յ սերտելու մեր պատմութիւնը քննական մօտեցումով: Արդեօք եթէ մէկը գիտական եւ առարկայական ձեւով հարցականի ենթարկէ կամ մերժէ մեր կարգ մը ականդութիւնները՝ զայն ազգութեան նկատելու ենք: Ի՞նչ է արդեօք իր միտք բանին, ջանա՞լ թուի՞նք ներկայացնել իբրեւ ազգութեան մէկը: Փօսթաճեան մտածած է արդեօք թէ՛ կան պատշաճութեան սահմաններ, մեր վարմունքին մէջ ունենալու ենք չափ ու կշիռ, թէ՛ մամուլը փողոց չէ. դեռ աւելին, երբեք մտածած է թէ՛ այսօրինակ տրամաբանութիւն եւ մտածելակերպ ո՞ւր կրնան հասցնել մեզ: Արդեօք, ո՞ր դարուն մէջ կ'ապրինք: Կը կարծէ՞ թէ բռնատիրական վարչակարգի մը ներքեւ ենք, ուր խորհելու, արտայայտուելու եւ գործելու մէկ կերպ կայ: Ուրեմն, հա՞րկ է որ ամէն հայ մարդ միատեսակ մտածէ՞ հայ ըլլալու համար:

## 7. Անհիմն Զրպարտութիւն

Թորգոմ Փօսթաճեան ամէն ջանք կը թափէ զրպարտելու գիտ որ իբրեւ թէ ես մարմաջ մը ունիմ ապացուցանելու թէ՛ ես չեմ հաւատար Հայց. Եկեղեցւոյ առաքելական ծագումին: Եթէ ատիկա ճշմարտութիւն ըլլար ես իմ գրքիս մէջ լման գլուխ մը պիտի չյատկացնէի Հայաստանի մէջ Թադէոս եւ Բարթողիմէոս առաքելներու մատուցած աւետարանչութեան բախտորոշ դերին (էջ 9-17):

Մտքերու մէջ կասկած արթնցնելու դիտաւորութեամբ, Փօսթաճեան կը ջանայ ինծի վերագրել տեսակէտներ, ըստ որոնց ես չեմ հաւատար Հայ Եկեղեցւոյ առաքելական ծագումին: Փաստօրէն ատիկա սխալ վերագրում մըն է: Այդ մասին իմ վկայութիւնս հակիրճ կերպով ներկայացուցած եմ հետեւեալ ձեւով. «Թէեւ Հայաստանի մէջ քրիստոնէութեան մուտքին եւ տարածման մասին վաւերական փաստաթուղթեր չկան, բայց ազգային որոշ ականդութիւններ կան, որոնք կը հաւաստեն Հայ Եկեղեցւոյ առաքելական ծագումը» (էջ 9): Հիմա թող ընթերցողը դատէ թէ՛ ո՞վ է խեղաթիւրողը՝ թուի՞նք ան թէ Փօսթաճեան:

## 8. Նսեմացնող Թէ Վսեմացնող

Փօսթաճեան բառերու հետ խաղալով գիտ կը ներկայացնէ իբրեւ «հակա-առաքելական բողոքական հոգեւորական մը ... որ մարմաջ ունի Հայց. Առաքե-

լական Եկեղեցին նսեմացած տեսնելու իր պատմական յատկանիշներէն եւ արժանիքներէն»։ Ասկէ աւելի անիրաւ ամբաստանութիւն կրնա՞յ ըլլալ մէկու մը մասին, որ միշտ հպարտ զգացած է Հայց. Առաքելական Եկեղեցիով եւ զայն միշտ նկատած է «Մայր Եկեղեցի»։ Թէեւ դարձեալ ինքզինք հակասելով, գոնէ տեղ մը արիւթիւն կ'ունենայ ըսելու որ Թութիկեան «ուսի շատ պատշաճ, ուղղամիտ եւ արդար գնահատութիւններ հանդէպ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ»։ Հոն կը մէջբերէ գրքիս Յառաջաբանէն հետեւեալը. «Հայ Եկեղեցին ծնաւ, ըստ մեր բարեպաշտ աւանդութեան, շնորհիւ Քրիստոսի երկու առաքեալներուն, Ս. Թադէոսի եւ Ս. Բարթողիմէոսի, աւետարանչական ջանքերով։ Հայ Եկեղեցին եղաւ ամէնէն զօրաւոր ազդակը հայ ազգի քաղաքակրթութեան եւ ստեղծագործ յառադիմութեան։ Հայ Եկեղեցին օժտեց հայ ազգը իր լեզուն արտայայտելու ուրոյն նշանագիրերով, որ զօրեղ միջոց մը հանդիսացաւ մեր ազգային գոյութիւնը մշտնջենաւորելու եւ զայն հաստատ վէմի վրայ դնելու։ ...Հայ Եկեղեցին նաեւ եղաւ հզօր ազդակ մը հայ ազգային-քաղաքական կեանքի գեղավարման մէջ։ Երբ պետութիւն ունեցանք ան գործեց պետութեան հետ ձեռք-ձեռքի։ Իսկ երբ մեր պետութիւնը կորսնցուցինք, ան ստանձնեց հայ ժողովուրդի հոգածութիւնը աշխարհի չորս ծագերուն» (էջ 7-8)։

## 9. Յերիւածոյ Պատմութիւն ԹԷ Ծշմարտութիւն

Յօդուածագիր Փօթաճեան կը գրէ թէ իմ գիրքը «կը վիտայ բազմաթիւ անճշգրտութիւններով եւ սուտերով» եւ ան կը թուէ քանի մը օրինակներ.

Ան կը հաւատայ թէ՛ Օրմանեան Սրբազանի պաշտօնավարութեան շրջանին (1896-1908), «Ոչ մէկ ջարդ տեղի կ'ունենայ...այս շրջանին ան գազանազուսպի մը նման կը յաջողի զսպել Սուլթան Համիտի ջարդարարութիւնները»։ Ընդունելով հանդերձ Փօթաճեանի հաստատումը, որ 1895-96ի Համիտեան ջարդերը տեղի կ'ունենային Օրմանեանի պաշտօնավարութեան նախորդող ամիսներուն, չենք կրնար համաձայնիլ իրեն հետ որ «Օրմանեանի պաշտօնավարութեան շրջանին ոչ մէկ ջարդ տեղի ունեցաւ»։

Արդարեւ, հարց կու տանք Փօթաճեանին թէ՛ արդեօք «սուտեր» էին թէ պատմական ճշմարտութիւններ որ Օրմանեանի պաշտօնավարութեան շրջանին տեղի կ'ունենային Համիտեան ջարդերը, ինչպէս Եւզոկիոյ կոտորածը, 1897ին եւ Սասնոյ ջարդերը, 1903-1904ին։ Կամ, արդեօք Օրմանեան սրբազանի՝ «օտար դեսպաններու միջամտութիւնը» ի խնդիր հայկական գաղութներու պաշտպանութեան, «սուտ եւ յերիւրածոյ պատմութիւնն է», թէ ճշմարտութիւն երբ Օրմանեան պատրիարք իր գրչով կը վկայէ իր «Խոհք եւ Խօսք» գրքին 67րդ գլխուն մէջ թէ՛ ինք ստիպուեցաւ օտար դեսպաններու միջամտութիւնը հայցել գաւառներու հարստահարուած եւ տառապող հայ ժողովուրդին համար։

(Շար. 1)

Տիբրոյթ

ՎԵՐ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

## Քրոնիկ

Երկուշաբթի, 1 Մարտի երեկոյեան Գանատայի Ազգային Առաջնորդութեան Տիկնանց Խորհուրդին կողմէ կազմակերպուեցաւ շնորհաւորական ձեռնարկ մը Գերշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեանի Առաջնորդական պաշտօնի վաւերացման առիթով: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Մեծի Տանն Կիլիկիոյ ընդառաջելով Գանատայի ազգայիններու կամֆին Փետրուար 24ին գրուած նամակով մը վաւերացուցած էր Սրբազան Հօր Առաջնորդ ընտրութիւնը Գանատայի Ազգային Երեսփոխանական ժողովին կողմէ:

Ուրբաթ, 12 Մարտին Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Աջահամբոյր եւ հոծ թիւով հայորդիներ շնորհաւորեցին Առաջնորդ Սրբազանը իր նոր կոչման համար:

• • •

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին հրաւերով, 16-19 Մարտին Կաթողիկոսարան կը գտնուէին Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի Թեմերու Առաջնորդ Սրբազան Հայրերը (Գերշ. Տ. Օշական Արք. Զուլոյեան, Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Գերշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեան) եւ Ազգային Իշխանութեանց ներկայացուցիչները: Անոնք առանձնակի եւ խմբական հանդիպումներ ունեցան Վեհափառ Հայրապետին եւ Ազգային կեդրոնական Վարչութեան կրօնական ու քաղաքական ժողովներուն հետ:

Հանդիպումներուն ընթացքին քննարկուած են թեմեր-կաթողիկոսարան յարաբերութիւնները, շրջանային հարցեր միջ-թեմականօրէն դիմակալելու կարելիութիւնները եւ հաւատացեալներու կարիքները հոգալու ծրագիրներ:

• • •

Կիրակի, 28 Մարտին Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեան Կաթողիկոսարանի Ուխտի Օրուան առիթով պատարագեց եւ քարոզեց Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ:

Սրբազան Հայրը իր քարոզին մէջ ըսաւ. «Գր. Լուսաւորիչ հիմքն է մեր ազգային գոյամարտին: Անոր ոգիին վրայ հիմնուած է մեր մշակոյթին շէնքը, ինչպէս նաեւ մեր ինքնութեան համար մղուող ազատամարտը:

Հայց. Եկեղեցւոյ ամբողջանուէր առաքելութեան խորհրդանշանն է ան: Արդ, ոչ ոք մենաշնորհը ունի Հայց. Եկեղեցւոյ առաքելութեան սահմաններ գծելու»:

• • •

Մարտ ամիսին սկսեալ Առաջնորդութեան կրօնական ժողովի ատենադպիր եւ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ Հովիւ Արժ. Տ. Գառնիկ Քհնյ. Գոյունեան ամէն Կիրակի առաւօտ ժամը 7.30ին հոգեւոր խորհրդածութիւն կը կատարէ CKDG 105.1 FM կայանէն:

• • •

Կիրակի, 4 Ապրիլին՝ Ծաղկազարդի առիթով Առաջնորդ Սրբազան Հայրը պատարագեց եւ ֆարգեց Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ: Նոյն յետմիջօրէին Սրբազան Հօր հովանաւորութեամբ Թորոնթոյի մէջ Հայ Երիտասարդական Կեդրոնին բացումը կատարուեցաւ:

• • •

Կիրակի, 11 Ապրիլին՝ Ս. Զատկուայ տօնին առիթով Առաջնորդ Սրբազանը Ս. Պատարագ մատոյց եւ պատգամեց Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ:

Սրբազան Հայրը իր պատգամին մէջ ըսաւ. «Կ'ապրինք ժամանակի մը մէջ ուր մարդկային իրաւունքները ամենէն աւելի ոտնակոխուած են եւ կը ոտնակոխուին: Քրիստոսի վրայ մեր վստահութեամբ եւ Քրիստոսի խաղաղութեամբ պիտի դիմանանք եւ յաղթահարենք բոլոր դժուարութիւնները»:

Յետ Պատարագին Աշահամբոյր տեղի ունեցաւ եւ առաւել քան հազար հայորդիներ շնորհաւորեցին Առաջնորդ Սրբազան Հօր նոր կոչումը:

Ապա Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը իր կազմակերպած ընդունելութեան ընթացքին պանակէ նուիրեց Սրբազան Հօր:

• • •

Զորեքշաբթի, 14 Ապրիլի երեկոյեան Քէպէֆի Ընդհանուր Կառավարիչ Տիկ. Լիզ Թիպօ պաշտօնական այցելութիւն մը տուաւ Մոնթրէալի Հայ կեդրոն, որպէսզի Քէպէֆի Խորհրդարանին որդեգրած 194 Բանաձեւի տպագիր օրինակը յանձնէ Հայ Դատի յանձնախումբին: Բանաձեւը 24 Ապրիլը Հայոց ցեղասպանութեան յիշատակի օր կը յայտարարէ: Այդ առիթով Առաջնորդ Սրբազան Հայրը յանուն գանատահայութեան շնորհակալութիւն յայտնեց Ընդհանուր Կառավարիչին:

• • •

Երեքշաբթի, 20 Ապրիլին Առաջնորդ Սրբազանը Հայ Դատի յանձնախումբին եւ Ազգային գանազան կառոյցներու ներկայացուցիչներու հետ Քէպէֆի Խորհրդարան մեկնեցաւ եւ Ն. Վ. Պրն. Միշէլ Պիսոնէթին յանձնեց Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի կոնդակը, որ 194 Բանաձեւի որդեգրման համար կը շնորհաւորէ Քէպէֆի Ազգային ժողովի բոլոր անդամները:

• • •

Զորեմբաբի, 21 Ապրիլին Առաջնորդ Սրբազան հայրը եկեղեցական դասով եւ ազգային կառույցներու ներկայացուցիչներով մեկնեցաւ Օթթաուա եւ ներկայ եղաւ Խորհրդարանի կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման բուժարկութեան: Այնտեղ ներկայ էր նաեւ Էջմիածնական Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բագրատ Եպս. Գալստանեան իր եկեղեցական դասով եւ կառույցներու ներկայացուցիչներով: Յետ բուժարկութեան, Խորհրդարանի բակին մէջ զետեղուած Յաւերժական Բոցին առջեւ երկու Առաջնորդները շրջապատուած եկեղեցականներով եւ ազգայիններով մեծ յուզումով աղօթք մատուցին առ Աստուած մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու հոգւոց համար: Եւ փառք տուին Աստուծոյ արդարութեան յաղթանակի այն օրուան համար:

• • •

Շաբաթ, 24 Ապրիլի առաւօտուն Առաջնորդ Սրբազանը նախագահեց Հայ Դատի կոչով դէպի Գանատայի Ազգային Խորհրդարան շնորհակալութիւն յայտնելու փութացած 4500 հոգիներով ժողովրդական հաւաքին:

Նոյն օրը երեկոյեան Ս. Յակոբ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Միջ-յարանուանական Ս. Պատարագ: Պատարագը մատուց Սրբազան Հայրը, Ս. գրային ընթերցում եւ աղօթական խորհրդածութիւն ըրաւ Հայ Աւետարանական Համայնքի Հովիւ Վեր. Մհեր Խաչիկեան, իսկ օրուան պատգամը տուաւ Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդական Փոխանորդ Գերշ. Գեորգ Մ. Վրդ. Զապարեան:

• • •

Կիրակի, 25 Ապրիլի երեկոյեան Առաջնորդ Սրբազան Հայրը նախագահեց Հայ Դատի կազմակերպած մեծ ձեռնարկին, որ տեղի ունեցաւ Մոնթրէալի Հայ Կեդրոնի մարզասրահին մէջ: Շուրջ 800 հոգիներ եկած էին շնորհակալութիւն յայտնելու համար Գանատայի Խորհրդարանի այն դէմքերուն՝ որոնք Հայոց Ցեղասպանութեան ճանաչման համար տփնեցան: Առաջնորդ Սրբազան Հայրը յատուկ գնահատագրերով պատուեց արդարութեան նուիրեալ քաղաքական դէմքերը:

### Նուիրատուութիւններ «Լոյս»ին

Ժամին Մուսախանեան	100 տոլար
Փրոֆ. Շաֆէ Տէր Մելիֆոնեան-Մինասեան	50 տոլար

## ՀԱՆԳԻՍ

### **Տ. Զարեհ Արքեպիսկոպոս Ազնաւորեանի**



ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Գանատայի Թեմի Առաջնորդ՝ Բարձրաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Յակոբեան, Թեմի Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը, եւ Կիլիկեան Ս. Աթոռի Միաբանութիւնը խոր վիշտով կը գուժեն սրբակենցաղ եւ բազմավաստակ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովի Ատենապետ՝

### **Տ. Զարեհ Արքեպիսկոպոս Ազնաւորեանի**

(1947-2004)

վախճանումը, որ պատահեցաւ Ուրբաթ, 30 Ապրիլին, Լիբանանի մէջ:

Երջանկալիչատակ Սրբազան Հօր վերջին օծումը եւ բաղման կարգը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 3 Մայիսին, առաւօտեան ժամը 10-ին, Անթիլիասի Մայր Տանարին մէջ, որմէ ետք մարմինը ամփոփուեցաւ Կաթողիկոսարանի միաբանական դամբարանին մէջ:

Առաջնորդ Սրբազան Հօր՝ Տ. Խաժակ Արքեպիսկոպոսի հրահանգով, Կիրակի, Մայիս 2-ին, Գանատայի Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Հոգեւոյս Սրբազանին հոգւոյն խաղաղութեան համար:

Դիւան  
Ազգային Առաջնորդարանի  
Մոնթրէալ